Սկսվեց «Հայկական լեռնաշխարհը հայոց եւ համաշխարհային քաղաքակրթության բնօրրան» խորագրով սեմինարների շարքը

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ, երեկ Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում բացվեց «Հայկական լեռնաշխարհը հայոց եւ համաշխարհային քաղաքակրթության բնօրրան» խորագրով հայագիտական սեմինարների շարքը:

Գիտական այս սեմինարները, որոնք կտեւեն մինչեւ մայիս, պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի խոսքերով, նվիրված են Հայաստանի պատմության էթնիկ շրջանին: Հայաստանի պատմական ժողովրդագրության բազում կնճռոտ հարցերի բացահայտման համար անհրաժեշտ է համալիր մոտեցում ցուցաբերել, ուստի այս սեմինարներին պատմաբանների հետ միասին կմասնակցեն նաեւ հնագետներ, ազգագրագետներ, ֆիզիկոսներ, մաթեմատիկոսներ, ճարտարագետներ:

Ըստ Ա.Մելքոնյանի, այս սեմինարներն ու առաջիկա գիտաժողովը մեծապես կնպաստեն նաեւ իրենց կարեւորագույն խնդրի՝ հայոց պատմության բազմահատորյակի հրատարակմանը:

Այն հարցին ի պատասխան, թե պատմության ինստիտուտն ինչ քայլեր է ձեռնարկում աշխարհին Հայաստանի ճշմարիտ պատմությունը ներկայացնելու ուղղությամբ, Ա.Մելքոնյանը հիշեց թուրք պատմաբաններից մեկի անկեղծ այն խոսքերը, թե «Ձեր գործն ավելի դյուրին է, քանզի դուք պետք է ապացուցեք, որ մածունը սպիտակ է, իսկ մենք պետք է ապացուցենք, որ սեւ է», եւ ապա ավելացրեց. «Ցեղասպանության ճանաչման փաստը բազմաթիվ երկրների կողմից խոսում է այն մասին, որ հայ պատմաբաններն այդ հարցում հաղթանակ են տանում, որովհետեւ ճշմարտությունն է մեր կողքին, եւ մենք պատմաշինարարությամբ զբաղվելու մտադրություն ամենեւին չունենք»:

Սեմինարների արդյունքները, Ա.Մելքոնյանի հավաստմամբ, կամփոփվեն մայիսին կայանալիք միջնադարյան Հայաստանին նվիրված հայագիտական երկրորդ գիտաժողովի ընթացքում: Նա ցավով նշեց նաեւ, որ չունեն տեղեկատվական կայուն համակարգ, որի շնորհիվ սփյուռքահայ պատմաբանները եւս կարողանային տեղեկանալ այս սեմինարների ընթացքին եւ արդյունքներին, սակայն հույս հայտնեց որ կստեղծվի հայագիտական հանդես, որը կունենա նաեւ իր ինտերնետային էջը:

Նշենք, որ սեմինարների այս շարքի անցկացման գործում պատմության ինստիտուտին մեծապես աջակցում են ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտը եւ Լոս Անջելեսում հեռարձակվող «Վարդանանք» հեռուստածրագրերի տնօրինությունը:

Արմենպրես